թիվ 93, հոկտեմբեր 29, 2011 թ.

Ասպարեզում բասկետբոլիստներն ու վոլեյբոլիստներն էին

Հայաստանի առաջին խաղ[illegible]
նության հանդիպումները: Վանաձո-
ռի «Լոռին» ֆուտբոլի ակադեմիա-
յում հյուրընկալել էր մայրաքաղա-
քի «Էրեբունի» թիմին: Բարձրագույն
վով:

Հետաձգված խաղում նոյեմբերի
24-ին «Լոռին» Վանաձորում 4:1
հաշվով հաղթեց Երևանի «Ավան
նում: «Լոռին» [illegible]
ջում է առաջատարին «Արցախ»
թիմին:

Վանաձորի քաղաքապետարանի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Սաֆարյանից տեղեկացանք, որ քաղաքապետարանից հետո Վանաձորի «Կենտրոն» համալիր մարզադպրոցում ավարտվել է բասկետբոլի գավաթի խաղարկությունը, որին մասնակցել են տղաների և աղջիկների 6-ական թիմեր: Երկու մրցումներում էլ հաղթողի կոչմանն են արժանացել մարզկենտրոնի թիվ 5 ավագ դպրոցի թիմերը: Աղջիկների պայքարում 2-րդ ու 3-րդ տեղեր են գրավել համապատասխանաբար թիվ 18 միջնակարգ դպրոցի և «Տարածաշրջանային քոլեջ» թիմերը: Տղաների պայքարում «Տարածաշրջանային քոլեջ» թիմը գրավել է 2-րդ տեղը, մրցանակային եռյակը եզրափակել է «Էվրիկա» հանրակրթական դպրոցի թիմը: Տարբեր օղակներում լավագույն խաղացողներն են ճանաչվել Դիանա Բարխուդարյանը (թիվ 18 դպրոց), Շուշանիկ Դալայանը (թիվ 5 դպրոց), Տաթև Մելքոնյանը («Տարածաշրջանային քոլեջ»), Տիգրան Սանթրոսյանը («Էվրիկա»), Արմեն Նահապետյանը (թիվ 5 դպրոց) և Զավեն Մարգարյանը («Տարածաշրջանային քոլեջ»): Պարգևները հանդիսավորությամբ թիմերին են հանձնել փոխքաղաքապետ Արտյոմ Գրիգորյանն ու ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Գևորգ Մացակյանը:

Հաջորդ օրերին կայացան վոլեյբոլի մրցումները: Տղաների և աղջիկների պայքարում հաղթող ճանաչվեցին թիվ 11 ավագ դպրոցի աշակերտները: Տղաների մրցումներում 2-րդ և 3-րդ տեղեր գրավեցին թիվ 6 հիմնական և թիվ 5 ավագ դպրոցների թիմերը, իսկ աղջիկների մրցաշարում 2-րդ տեղը զբաղեցրեց թիվ 13 ավագ դպրոցի թիմը: Մրցանակային եռյակը եզրափակեց ՎՊՀ հենակետային վարժարանի ընտրանին:

Վոլեյբոլի մրցումներում լավագույնն են ճանաչվել Էլիզա Հարությունյանը (թիվ 11 դպրոց), Նարինե Դալլաքյանը (թիվ 13 դպրոց), Կալինա Շահամիրյանը (ՎՊՀ հենակետային վարժարան), Ռաֆիկ Աղբալյանը (թիվ 5 դպրոց), Ալեն Հարությունյանը (թիվ 6 դպրոց) և Տիգրան Ղամբարյանը (թիվ 11 դպրոց):

ԳԵՎՈՐԳ ԽԱՉԻԿՅԱՆ